Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի զարգացման ծրագիր

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.1 Լրիվ անվանումը **Գյումրու հոգեկան առողջության կենտրոն**

1.2 Կազմակերպաիրավական ձևը **ՓԲԸ**

1.3 Կազմակերպության ստեղծման տարեթիվը՝ 1996

1.4 Կազմակերպության ստեղծման նպատակը՝ ազգաբնակչության հոգեբուժական և նարկոլոգիական հիվանդների բուժման և սպասարկման ծառայությունների մատուցում

1.5 Կազմակերպության կողմից լուծվող խնդիրները՝

հոգեկան խանգարումներով տառապող անձանց ախտորոշում, բուժում, հսկողություն, դեղորայքով ապահովում, խնամքի իրականացում, դատահոգեբուժական փորձաքննության իրականացում

Զարգացման ծրագիր

Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի զարգացման ծրագիրը իր մեջ ներառում է կազմակերպության զարգացման, ՀՀ հոգեբուժության բարեփոխման ռազմավարության համահունչ հոգեկան հիվանդների բուժման, խնամքի և ծառայությունների մոտեցման առումով բժշկագիտության առաջավոր փորձի ներդրում, կազմակերպության աշխատանքային պայմանների բարելավման, մասնագիտական ինչպես նաև ֆինանսական և կառավարման ոլորտի բարեփոխումների մի համալիր, որի նպատակն է հոգեբուժական օգնության և սպասարկման որակի և մատչելիության բարձրացումը, հոգեկան խնդիրներ ունեցող անձանց բուժման և խնամքի առումով պայմանների միջազգային ընդունված չափանիշների ապահովումը, աշխատողների աշխատանքի պայմանների և արժանապատիվ աշխատավարձերի սահմանումը:

Միջոցառում	Ժամկետ	Միջոցառման նկարագիր և ֆինանսավորման աղբյուր	Ֆինանսավորում	Ակնկալվող արդյունքներ
1.Անձնակազմի (բժիշկներ և բուժքույրեր) հերթական պարբերական վերապատրաստումների կազմակերպում	2019-2020թթ.	Օժանդակել բժիշկներին և բուժքույրերին պետական բժշկական համալսարանի հետբուհական կրթության ամբիոնի կողմից՝ արտագնա դասընթացների ծրագրով բուժքույրերի, իսկ անմիջապես համալսարանի հոգեբուժության ամբիոնում, բժիշկների վերապատրաստման գործընթացին	Բուժհաստատության և անձնական միջոցներով	Միջոցառումն ակնկալում է Հոգեկան առողջության կենտրոնի բուժաշխատողների գիտելիքների և որակավորման բարձրացում, նրանց կողմից ազգաբնակչությանը մատուցվող հոգեբուժական օգնության և սպասարկման որակի և մատչելիության բարձրացում
2. Գյումրու հոգեկան առողջության կենտրոնին կից սոցիալ-հոգեբանական վերականգնման ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծում	2020-2022թթ	Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի հարակից կառույցի ներքին կոսմետիկ վերանորոգում, կահավորում և սեփական մարդկային ռեսուրսների (հոգեբույժ, հոգեբան, սոց.աշխատող, բուժքույրեր) օգնությամբ ապահովել հոգեկան հիվանդների զբաղվածությունը և նրանց ցերեկային խնամքը	Շվեյցարական ԿԱՀԱ կազմակերպության կողմից ակնկալվող ֆինանսական միջոցներով	Հոգեկան հիվանդները համապատասխան մասնագետների օգնությամբ կենթարկվեն սոցիալ-հոգեբանական ռեաբիլիտացիայի, կապահովվի նրանց ցերեկային զբաղվածությունը, կուսուցանվեն կենցաղային ինքնուրույն կյանք վարելու հմտություններ, որոշները կկարողանան իրենց տներում ապահովել ինքնուրույն կյանքը՝ չկտրվելու ընտանիքից: Կենտրոնի որոշ ծառայություններից կօգտվեն նաև բուժհաստատության ստացիոնարում երկարատև խնամք ստացող հիվանդները:
3. Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննության գործառույթի իրականացում	2022-2024թթ	Լիցենզիայի առկայության պայմաններում մասնագետների որակավորման հարցի լուծումից հետո Շիրակի մարզի ազգաբնակչության համար Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում քաղաքացիական գործերի շրջանակներում իրականացնել դատահոգեբուժական փորձաքննություն	Ֆինանսական ներդրում չի պահանջում	ՀՀ Շիրակի մարզի հոգեկան հիվանդների գործունակության որոշման նպատակով հիվանդների տեղափոխությունները՝ թե բուժհաստատության, և թե հարազատների կողմից մայրաքաղաք կամ Վանաձոր կբացառվի: Կմատուցվի նաև տնային այցելությունների միջոցով անգործունակության որոշում՝ վճարովի սկզբունքով որը կնպաստի բուժհաստատության եկամուտների ավելացմանը, բուժաշխատողների աշխատավարձի և աշխատանքային պայմանների բարելավմանը:

4.Նարկոլոգիական բաժանմունքի հիմնանորոգում	2020-2021թթ	Նարկոլոգիական բաժանմունքի ներքին հարդարման և կոսմետիկ վերափոխման աշխատանքների իրականացում, սանհանգույցի վերանորոգում, մատուցարանի ներքին հարդարում	Բուժհաստատության սեփական միջոցների հաշվին	Բաժանմունքը կդառնա հարմարավետ, բարեկարգ սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխա՝ որը կնպաստի նարկոլոգիական հիվանդների որակյալ բուժօգնության և սպասարկման ապահովմանը, ինչպես նաև բուժաշխատողների աշխատանքի պայմանների բարելավմանը:
5.Ալկոթեստի սարքի ձեռքբերում	2020-2021թթ.	Բուժհաստատության կողմից իրականացվող ալկոհոլի գործածման փաստի հայտնաբերման գործառույթի իրականացման նպատակով սեփական սարքի ձեռք բերում	Բուժհաստատության սեփական միջոցների հաշվին	Տեխնիկական խոչընդոտների վերացում, որոնք առաջացել են այլ հաստատությունից ժամանակավոր գործածման նպատակով վերցված բարոյապես և ֆիզիկապես մաշված սարքի շահագործման պայմաններում
6. Ջեռուցման հին համակարգի (կենտրոնացված կաթսայատան) փոխարինում նոր, ավելի խնայող ռեժիմով աշխատող համակարգով	2022-2023թթ	Ներդնել նոր, առավել մեծ մակերեսով ռադիատորներ՝ նորառոճ և խնայողական ռեժիմով աշխատող տաքացուցիչով	Սեփական միջոցների հաշվին	Լույսի և գազի ծախսի խնայողություն, աշխատավարձի հոդվածի խնայողություն
7. Բուժհաստատության հիմնական շենքի գազաֆիկացում:	2022-2023թ	Հարակից կառույցից գազի խողովակաշարը հասցնել հիմնական շենք և մատուցարաններում ներդնել գազի ջրատաքացուցիչներ և գազօջախներ, նախկին էլեկտրականների փոխարեն	Սեփական միջոցների հաշվին	Գազի օգտագործումը ավելի էժան կլինի, խնայված ֆինանսական միջոցները կուղղվեն հոգեկան հիվանդների բուժման և սպասարկման որակի լավացմանը
8. Շինության կտուրի պահանջվող նորմերին համապատասխան հակահրդեհային միջոցառումների իրականացում		Շինության կտուրի փայտյա կառուցատարրերը մշակել հրակայուն լուծույթով կամ պատվածքով: Կտուրի պարագծով տեղադրել մետաղական ճաղաշար: Հրշեջ ներքին ծորակները համալրել փողակով և փողրակով:	Սեփական միջոցների հաշվին	Նշված միջոցառումները նվազագույնի կհասցնեն հնարավոր հրդեհների բռնկումը

9. Որպես հակահրդեհային միջոցառում շենքն ապահովել հրդեհ ազդարարող սարքով		Շինությունում մոնտաժել հրդեհ ազդարարող սարք և տագնապի ազդանշանը միացնել նաև լիազոր մարմնին	Սեփական միջոցների հաշվին	Կկանխվեն բոլոր տեսակի հրդեհներն իրենց հետևանքներով
10.Աշխատողների աշխատավարձի բարձրացում մինչև 10%	2020-2024թթ	Ստեղծված վճարովի ծառայությունների և խնայողությունների արդյունքում ստացած եկամուտների հաշվին	Վճարովի մուտքերի և պետբյուջեի հատկացումների միջոցով	Կբարելավվի բուժհաստատության աշխատողների կյանքի որակը, որը կբերի նաև նրանց պատասխանատվության բարձրացմանը հիվանդներին որակյալ բուժօգնության և սպասարկման իրականացման ոլորտում: